ՀՀ Վարչական դատարանին

Հայցվոր՝
Աշոտ Արծրունի Եղիազարյան
Անձնագիր՝ AK 0604664, տրված 25.08.2010թ., 049-ի կողմից
Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Մանանդյան 29, բն. 59

Ներկայացուցիչ՝
Գեւորգ Ղուկասի Հայրապետյան
Նույնականացման քարտ՝ 004455168, տրված 26.12.2014թ.-ին 001-ի կողմից
Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, 0054, Դավթաշեն 1-ին թ., 51շ., 56բն.

Ծանուցման հասցե՝
ՀՀ, ք. Երեւան 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Պատասխանող՝
ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողով
Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Կիեւյան 16

Հայցադիմումը ներկայացվել է առձեռն

Հայց

վարչական մարմնի անգործությունը (գործողությունը) ոչ իրավաչափ ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին

ՀՀ վարչական դատարանին ենք դիմում՝ իրացնելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով երաշխավորված, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ եւ “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի (հետայսու՝ նաեւ Օրենք) 11-րդ հոդվածով ձեւակերպված դատական պաշտպանության մեր իրավունքը:

1. Հայցի էության հակիրճ նկարագրությունը

1.1. Աշոտ Եղիազարյանը (այսուհետ նաեւ՝ ԻԱԿ, Վստահորդ) 2015թ.-ի օգոստոսի 31-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողով (այսուհետ նաեւ՝ Հանձնաժողով, Պատասխանող)՝ խնդրելով տեղեկություններ իր գիտական աշխատանքի փորձաքննության վերաբերյալ: Հանձնաժողովը “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքով (այսուհետ նաեւ՝ Օրենք) սահմանված ժամկետներում հարցմանը չի պատասխանել: Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ Պատասխանողը տրամադրել է

պատասխան գրություն՝ որը չի համապատասխանում Օրենքի պահանջներին: Պահանջված տեղեկությունները պատասխանողը չի տրամադրել: Սույն հայցով խնդրվում է ոչ իրավաչափ ճանաչել Օրենքով սահմանված ժամկետում Աշոտ Եղիազարյանին տեղեկություն չտրամադրելու՝ Հանձնաժողովի անգործությունը (Աշոտ Եղիազարյանի հարցմանը չպատասխանելը) եւ պարտավորեցնել Հանձնաժողովին տրամադրել պահանջվող տեղեկությունները:

2. Փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը

2.1. 2015 թվականի օգոստոսի 31-ին Աշոտ Եղիազարյանը փոստային ծառայությամբ ուղարկված տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ (այսուհետ՝ հարցում) դիմել է ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովին:

2.2. Հարցմամբ Հանձնաժողովից իմ Վստահորդը խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

2.2.1. Գիտական աշխատանքները փորձաքննության ուղարկելը կարգավորող իրավական ակտի պատճենը (փորձաքննության ուղարկելու կարգ, կանոնակարգումներ, չափանիշներ կամ այլ փաստաթուղթ),

2.2.2. Իր գիտական աշխատանքը փորձաքննության ուղարկելու մասին ԲՈՀ-ի որոշման պատճենը,

2.2.3. Իր գիտական աշխատանքը փորձաքննության ուղարկելու (փորձագետի հետ կնքված) պայմանագրի պատճենը:

2.3. Հարցումը Հանձնաժողովին ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2015թ.-ի օգոստոսի 31-ին:

2.4. Հանձնաժողովն իմ Վստահորդի հարցմանն ի պատասխան տրամադրել է 19.09.2015թ. թվագրված թիվ 339-01 գրությունը:

2.5. Հանձնաժողովի թիվ 339-01 գրությունն ունի հետեւյալ բովանդակությունը.

2.5.1. Հարգելի պարոն Եղիազարյան,
ի պատասխան ձեր 31.08.2015թ. “Տեղեկատվություն ստանալու հարցմանը” հայտնում ենք, որ ԲՈՀ-ն ատենախոսություններն /այդ թվում նաեւ ձերը/ փորձաքննության է տալիս ղեկավարվելով ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 31-րդ կետով:
Ձեր դեպքում ծանոթանալով ձեր դոկտորական ատենախոսության պաշտպանության նիստի սղագրությանը ընդդիմախոսների կարծիքներով հանդերձ, աշխատանքը փորձաքննության տալն ուղղակի անհրաժեշտություն էր:
ԲՈՀ-ի նախագահ Լ. Արզումանյան

2.6. Հանձնաժողովի թիվ 339-01 գրությունն իմ Վստահորդին ուղարկվել է 2015թ.-ի սեպտեմբերի 19-ին:

3. Հայցի իրավական հիմքերը

3.1. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից”:

3.2. ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք”:

3.3. ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: … Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի”:

3.4. “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից”:

3.5. “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության, և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: ...”:

3.6. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի (այսուհետ նաեւ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ “ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը”:

3.7. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ տեղեկություն տնօրինող են այդ թվում պետական կառավարման մարմինները եւ պետական հիմնարկները:

3.8. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ “Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը”:

3.9. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ “Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը”:

3.10. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ “Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները”:

3.11. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-ին կետի համաձայն՝ “Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ”:

3.12. Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ “Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը”:

3.13. Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ “Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ … տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն…”:

3.14. ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ “Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները…”:

3.15. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ “Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել … գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ. 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում…”:

4. Հայցի փաստարկները

Վարչական մարմնի անգործությունը (գործողությունը) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի վերաբերյալ

4.1. Հանձնաժողովը իմ Վստահորդի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված եւ “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքում ամրագրված՝ տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքներն ապահովելու համար պարտավոր էր կատարել

4.1.1. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով կամ նույն հոդվածի 10-րդ կետով սահմանված գործողություններից որեւէ մեկը,

կամ

4.1.2. նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված գործողություններից որեւէ մեկը, ընդ որում՝ Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

4.2. Սույն հայցի 4.1.1. ենթակետում դեպքում խոսքը գնում է հայցվող տեղեկատվությունն ըստ էության տրամադրելու մասին, երբ ըստ Օրենքի Հանձնաժողովը պարտավոր էր.

- կամ հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում տրամադրել հարցմամբ խնդրվող տեղեկությունները եւ փաստաթղթերի պատճենները,
- կամ հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում հայցվող տեղեկությունները հրապարակված լինելու դեպքում տրամադրել տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը (հղում կատարել տեղեկատվության աղբյուրին),
- կամ տրամադրելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքում հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր հայտներ դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը,
- կամ փնտրվող տեղեկությունը չունենալու կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս լինելու դեպքում հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը (հղում կատարել տեղեկություն տնօրինող այլ մարմնի):

4.3. Սույն հայցի 4.1.2. ենթակետում դեպքում խոսքը գնում է հայցվող տեղեկատվության տրամադրումը մերժելու մասին, երբ ըստ Օրենքի Հանձնաժողովը պարտավոր էր

- կամ հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերի առկայության դեպքում մերժել խնդրվող տեղեկությունները,
- կամ, եթե պահանջվող տեղեկության միայն մի մասն է պարունակում տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում տեղեկություն տրամադրեր մնացած մասի վերաբերյալ, իսկ մնացած մասով մերժեր:

Ընդ որում, տեղեկատվության տրամադրումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով Հանձնաժողովը պետք է ներկայացներ գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը:

4.4. Հանձնաժողովի չի կատարել “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով կամ նույն հոդվածի 10-րդ կետով կամ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված գործողություններից որեւէ մեկը՝ այն է, իմ Վստահորդի գրավոր հարցմանն ի պատասխան Օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում չի տրամադրել գրավոր պատասխան կամ գրավոր մերժում՝ դրսեւորած անգործությամբ (գործողությամբ) խախտել է Օրենքի վերոնշյալ հոդվածների պահանջները, ուստի Հանձնաժողովի անգործությունը (գործողությունը) ոչ իրավաչափ է:

4.5. Հանձնաժողովն իմ Վստահորդի կողմից տեղեկատվություն ստանալու հարցում ստանալուց հետո 5-օրյա ժամկետում որեւէ պատասխան չի տրամադրել՝ դրսեւորած անգործությամբ (գործողությամբ) խախտել է իմ Վստահորդի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված եւ “Տեղեկատվության

ազատության մասին” ՀՀ օրենքով սահմանված տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքները:

Տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի վերաբերյալ

4.6. Թեեւ Հանձնաժողովը պատասխանել է իմ Վստահորդի հարցմանը, սակայն այդ պատասխանը պատշաճ չէ, Հանձնաժողովը պատասխան գրությամբ չի տրամադրել իմ Վստահորդի պահանջած տեղեկությունները: Այսպես.

4.6.1. Իմ Վստահորդը խնդրել է տրամադրել գիտական աշխատանքները փորձաքննության ուղարկելը կարգավորող իրավական ակտի պատճենը (փորձաքննության ուղարկելու կարգ, կանոնակարգումներ, չափանիշներ կամ այլ փաստաթուղթ): Հանձնաժողովի պատասխան գրության մեջ նշվել է ՀՀ գիտական աստիճանաշնորհման հանոնակարգի գոյության մասին, սակայն դրա կամ դրա համապատասխան իրավական դրույթի պատճենի տրամադրման վերաբերյալ Օրենքով սահմանված գործողություններից որեւէ մեկը Հանձնաժողովը չի կատարել (իմ Վստահորդին չի տրամադրել պահանջված փաստաթղթի պատճենը, իմ Վստահորդին չի հայտնել դրա հրապարակման տեղի մասին, դրա տրամադրումը չի մերժել եւ այլն):

4.6.2. Իմ Վստահորդը խնդրել է տրամադրել իր գիտական աշխատանքը փորձաքննության ուղարկելու մասին ԲՈՀ-ի որոշման պատճենը: Հանձնաժողովի պատասխան գրության մեջ որեւէ հիշատակում պահանջված տվյալ տեղեկության վերաբերյալ չկա, փաստաթղթի պատճենի տրամադրման վերաբերյալ Օրենքով սահմանված գործողություններից որեւէ մեկը Հանձնաժողովը չի կատարել (իմ Վստահորդին չի տրամադրել պահանջված փաստաթղթի պատճենը, իմ Վստահորդին չի հայտնել դրա հրապարակման տեղի մասին, դրա տրամադրումը չի մերժել եւ այլն):

4.6.3. Իմ Վստահորդը խնդրել է տրամադրել իր գիտական աշխատանքը փորձաքննության ուղարկելու (փորձագետի հետ կնքված) պայմանագրի պատճենը: Հանձնաժողովի պատասխան գրության մեջ որեւէ հիշատակում պահանջված տվյալ տեղեկության վերաբերյալ չկա, փաստաթղթի պատճենի տրամադրման վերաբերյալ Օրենքով սահմանված գործողություններից որեւէ մեկը Հանձնաժողովը չի կատարել (իմ Վստահորդին չի տրամադրել պահանջված փաստաթղթի պատճենը, իմ Վստահորդին չի հայտնել դրա հրապարակման տեղի մասին, դրա տրամադրումը չի մերժել եւ այլն):

4.7. Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ “Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ … տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն…”: Սա նշանակում է, որ իմ Վստահորդի տեղեկատվության ազատության իրավունքը խախտած չլինելու համար ԲՈՀ-ը պարտավոր էր իր պատասխան գրությամբ տրամադրել իմ Վստահորդի պահանջած բոլոր տեղեկությունները (հարցման 1-ին, 2-րդ եւ 3-րդ հարցերով պահանջված) կամ պարտավոր էր անդրադառնալ իմ Վստահորդի պահանջած բոլոր կամ այս կամ այն

տեղեկության տրամադրման անհնարինությանը (Օրենքով սահմանված կարգով մերժեր, հայտներ տվյալ տեղեկության բացակայության մասին եւ այն): Սակայն ԲՈՀ-ը իր պատասխան գրությամբ իմ Վստահորդի պահանջած տեղեկությունները չի տրամադրել, չի անդրադարձել դրանց տրամադրման անհնարինությանը, ինչը ոչ իրավաչափ է:

4.8. Եթե դատարանը պարզի, որ Հանձնաժողովի կողմից իմ Վստահորդի տեղեկատվություն ստանալու հարցմունը ստանալուց հետո "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում որեւէ պատասխան չտրամադրելը ոչ իրավաչափ է, ինչպես նաեւ, եթե դատարանը սույն հայցի 4.6-4.8 կետերում մեր ներկայացրած փաստարկների եւ ապացույցների գնահատման արդյունքում պարզի, որ Հանձնաժողովն իր 19.09.2015թ.-ի թիվ 339-01 գրությամբ չի տրամադրել իմ Վստահորդի հարցմամբ պահանջված տեղեկությունները, ապա գտնում ենք, որ արդարացի իրավունք ունենք դատարանից խնդրելու պարտավորեցնել Հանձնաժողովին հնգօրյա ժամկետում տրամադրել Աշոտ Եղիազարյանի՝ 2015 թվականի օգոստոսի 31-ի գրավոր հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը:

5. Հայցը վարույթ ընդունելու հիմնավորումներ

5.1. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ "Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել … գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ. 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում…":

5.2. Իմ Վստահորդը իրեն գիտական աստիճանի շնորհման հետ կապված Հանձնաժողովում հարուցված վարչական վարույթի շրջանակներում կարիք է ունեցել ծանոթանալ իրեն (իր աշխատանքին) վերաբերող տեղեկությունների, այդ թվում՝ հարցմամբ իր պահանջված տեղեկություններին: Սակայն դա նրան չի հաջողվել: Իմ Վստահորդը իրեն գիտական աստիճանի շնորհման հետ կապված Հանձնաժողովում հարուցված վարչական վարույթի արդյունքների հետ չի համաձայնել, մտադիր է բողոքարկել դրանք: Դատարանին հայտնում ենք, որ իր իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով, իրեն գիտական աստիճան չշնորհելը բողոքարկելու ընթացքում, գիտական աստիճան ստանալու ճանապարհին իմ Վստահորդը բազմիցս առնչվելու է Հանձնաժողովի հետ, կարիք ունի իր գիտական աշխատանքի, դրա հետ կապված վարչական վարույթի մասին պարբերաբար տեղեկություններ ստանալ Հանձնաժողովից, ուստի իմ Վստահորդի համար առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ գործողություն կրկին կատարելու (տեղեկություն ստանալու հարցումն անպատասխան թողնելու եւ տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու) վտանգ: Հետեւաբար սույն հայցի պահանջը բխում է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից:

5.3. Բացի այդ, Իմ Վստահորդը վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման նպատակն ուղղված է վարչական մարմնի ոչ իրավաչափ անգործության (գործողության) ճանաչմանը եւ տեղեկատվություն ստանալու իրավունքի ենթադրյալ խախտման վերականգնմանը: Իր իրավունքի դատական պաշտպանությունն իրականացնելու նպատակով իմ Վստահորդը արդեն կատարել է եւ կատարելու է ծախսեր, որոնք չէր կատարի, եթե իր իրավունքը խախտված չլիներ: Ուստի, եթե պարզվի, որ վարչական մարմնի անգործությունը (գործողությունը) իրավաչափ չի եղել, ապա իմ Վստահորդը մտադիր է պահանջել վնասի հատուցում: Հետեւաբար սույն հայցի պահանջը բխում է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից:

5.4. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝ “Հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ … 5 տարվա ընթացքում՝ … սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործերով”: Ուստի, սույն հայցը ներկայացվում է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում:

5.5. Հայցի սույն կետում եւ համապատասխան ենթակետերում հիմնավորում ենք տեղեկություն տրամադրելու պարտավորեցնելու մասին պահանջի առկայությունը եւ փաստարկներ այն մասին, որ Հանձնաժողովի՝ վիճարկվող անգործությունը (գործողությունը) ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով իրեն սպառել է: Ներքոնշյալ փաստարկների հիման վրա գտնում ենք, որ սույն հայցը պետք է վարույթ ընդունվի առկա հայցապահանջներով.

5.5.1. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է տեղեկություն ստանալու հարցմանը պատասխան տրամադրելու ժամկետները: Նշված դրույթը ներկայացրել ենք սույն հայցի 3.8 կետում: Գտնում ենք, որ “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի իրավակարգավորումից ուղղակիորեն բխում է, որ 5-օրյա ժամկետում այլեւս սպառվում են տեղեկություն ստանալու հարցման արդյունքում տեղեկություն տնօրինող վարչական մարմնի կողմից կատարման ենթակա բոլոր գործողությունների առավելագույն ժամկետները, գործողությունն այլեւս համարվում է չկատարված, իսկ օրենքի պահանջը՝ խախտված: Նմանապես, միայն օրենքով սահմանված առավելագույն ժամկետի ընթացքում տեղեկություն տնօրինողի անգործությունը՝ հարցմանը չպատասխանելը, դեռեւս իրավաչափ է, եւ ոչ իրավաչափ է դառնում սահմանված ժամկետի ավարտից հետո անգործությունը շարունակելու դեպքում: Հետեւաբար, 5-օրյա ժամկետի ավարտից հետո այլեւս սպառված են տեղեկատվության ազատության ոլորտում իրավահարաբերությունները, նմանապես, սպառված են նաեւ օրենքի շրջանակներում գործելու կամ օրենքի շրջանակներում “անգործություն” դրսեւորելու՝ վարչական մարմնի հնարավորությունները (վարչական մարմինը այլեւս հնարավորություն չունի չխախտել 5-օրյա ժամկետը):

5.5.2. Պնդում ենք, որ իմ Վստահորդի՝ տեղեկատվության ազատության իրավունքի եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու

իրավունքի խախտումը վնասել է իմ Վստահորդին, թույլ չի տվել ձեռնամուխ լինել իր իրավունքների պաշտպանությանը, այդ թվում ստիպել է նյութական վնաս կրել իր իրավունքի ապահովման ճանապարհին: Իմ Վստահորդը ճանաչման հայցատեսակով դատարանին դիմելն անմիջականորեն կապել է իր իրավունքի խախտումն ամրագրելու եւ տեղեկատվության ազատության իրավունքը պաշտպանելու հետ, ընդ որում, իրավունքի խախտման արդյունքում կրած որեւէ վնասի հատուցում պահանջելու միտք է հայտնում դատարանին:

5.5.3. Բացի այդ, ՀՀ վարչական դատարանին հայտնում ենք, որ որպես ոչ իրավաչափ անգործություն (գործողություն) դիտարկում ենք ոչ թե տեղեկատվությունն ընդհանրապես չտրամադրելը, այլ՝ օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելը՝ անկախ այն բանից, թե հետագայում Հանձնաժողովը կտրամադրի տեղեկությունները, թե ոչ: “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է “կամ” շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը: Սա նկատի ունենալով՝ ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանը թիվ ՎԴ0040/05/15 վարչական գործով դիրքորոշում է հայտնել, որ “… հայցադիմումի՝ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի ընդունելության համար, տվյալ դեպքում, բավարար է, եթե վիճարկվող գործողությունը /անգործությունը/ համարվի իրեն որևէ այլ կերպ /բացի կատարումից/ սպառած: Փաստելով, որ հայցադիմումով պահանջը ներկայացվել է՝ օրենքով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրելու հիմքով, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ հայցվորի տվյալների արդեն իսկ հայցը ներկայացնելու պահին անցել է օրենքով սահմանված առավելագույն ժամկետը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ օրենքով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրելը պետք է դիտարկել որպես իրեն սպառած գործողություն /անգործություն/՝ անկախ տեղեկատվության ընդհանրապես տրամադրված լինելու կամ չլինելու հանգամանքից: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին համապատասխան, առավել եւս, որ հայցվորը մատնանշել է, որ հետապնդում է իր կրած վնասները հատուցելու նպատակ: Ուստի, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Մեծամորի քաղաքապետարանի գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի ընդունման մերժման մասով՝ ՀՀ վարչական դատարանի 20.02.2015թ. որոշումը ենթակա է վերացման”: Թիվ ՎԴ0040/05/15 վարչական գործով եւ սույն հայցով վարչական դատարանին ներկայացվող հանգամանքները նույնական են, այն է՝ թիվ ՎԴ0040/05/15 վարչական գործով հայցվորը նույն հայցապահանջներն է ներկայացրել ՀՀ վարչական դատարանին, ինչ ներկայացվում է սույն հայցով: Ուստի սույն հայցի ընդունելիության հարցը լուծելու համար կիրառելի են թիվ ՎԴ0040/05/15 վարչական գործով ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի դիրքորոշումները: ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ հոդվածներով սահմանված իրավունքով

մատնանշում եմ ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանի վերոնշյալ դատական ակտում դատարանի կողմից օրենքներին տրված մեկնաբանությունները. դրանք կիրառելի են սույն հայցի շրջանակներում հայցադիմումի ընդունելության հարցը լուծելիս:

5.6. Եթե ՀՀ վարչական դատարանը հայցի վարույթ ընդունելու փուլում գտնի, որ սույն գործով հայցվորի իրավունքներն ավելի արդյունավետ պաշտպանելու եւ վերականգնելու նպատակով ներկայացրած հայցատեսակը սխալ է ընտրված, ապա դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է վարույթ ընդունել հայցը եւ դատական նիստի ընթացքում պարզել հայցի առարկան եւ հիմքը: Այսպիսի իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը ՎԴ/2450/05/2011թ գործով 15.07.2011թ. "Բողոքը բավարարելու մասին" որոշման մեջ: ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանը որոշման մեջ հղում է կատարել ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածներին, ՀՀ "Վարչական դատավարության" օրենսգրքի 6-րդ հոդվածին (նախկին խմբագրմամբ՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio")), 8, 86-րդ հոդվածներին (նախկին խմբագրմամբ) եւ հանգել է եզրակացության, որ "եթե վեճը ծագել է հանրային իրավահարաբերություններից եւ այն վերապահված չէ նույն հոդվածի 2-րդ կետում նշված մարմինների քննությանը, ապա այդ գործը ենթակա է քննության ՀՀ Վարչական դատարանում": ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ հոդվածներով սահմանված իրավունքով մատնանշում եմ ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանի վերոնշյալ դատական ակտում դատարանի կողմից օրենքներին տրված մեկնաբանությունները. դրանք կիրառելի են սույն հայցի շրջանակներում հայցադիմումի ընդունման հարցը լուծելիս:

5.7. Սույն հայցով ներկայացված չէ պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ (անդորրագիր) հետեւյալ պատճառաբանությամբ. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն "Պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով": Միաժամանակ, առաջնորդվելով "Պետական տուրքի մասին" ՀՀ օրենքի 21-րդ եւ 22-րդ հոդվածների դրույթներով եւ հաշվի առնելով, որ իմ Վստահորդը ֆիզիկական անձ է, այլ ոչ թե առեւտրային կազմակերպություն՝ սույն հայցին կից ներկայացվում է միջնորդություն պետական տուրքի վճարումը տարաժամկետելու եւ պետական տուրքի վճարման հարցը վճռով լուծելու մասին:

5.8. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ "Դատական նիստին ներկայացուցչի հետ մասնակցող կողմն իրավունք ունի իր ներկայացուցչի լիազորությունները հաստատելու դատարանի առջև՝ բանավոր սահմանելով վերջինիս լիազորությունների ծավալը": Սույն հայցին կից ներկայացվում է Աշոտ Եղիազարյանի կողմից իր ներկայացուցիչ Գեւորգ Հայրապետյանին տրված լիազորագիր, որը նոտարական կարգով հաստատված չէ, քանի որ Աշոտ Եղիազարյանը պատրաստվում է իր ներկայացուցչի լիազորությունները բանավոր հաստատել դատարանի առջև:

6. Հայցի պահանջը

Ելնելով վերագրյալից եւ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի 6, 13-րդ հոդվածներով, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով եւ 11-րդ գլխի պահանջներով՝

Խնդրում եմ

6.1. ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի այն անգործությունը կամ գործողությունները, որով “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում պատասխան չի տրվել Աշոտ Եղիազարյանի կողմից տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ:

6.2. պարտավորեցնել ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի 5-օրյա ժամկետում տրամադրել Աշոտ Եղիազարյանի՝ 2015թ.-ի օգոստոսի 31-ի տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը:

7. Տեղեկություններ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ

7.1. Աշոտ Եղիազարյանի կողմից փնտրվող տեղեկատվությունը ԲՈՀ-ի կողմից Օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելը վերադասության կարգով չի բողոքարկվել, քանի որ “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքը նման պարտադիր պայման չի նախատեսում:

8. Ապացույցների ցանկը

8.1. Գրավոր ապացույց – Աշոտ Եղիազարյանի՝ 2015թ.-ի օգոստոսի 31-ի տեղեկություն ստանալու գրավոր հարցման կրկնօրինակը (վերաբերելի է սույն հայցի 2.1, 2.2 կետերում նշված փաստերին, 4.6 կետում, 4.6.1-4.6.3 ենթակետերում, 4.7 կետում նշված փաստարկներին),

8.2. Գրավոր ապացույց – Աշոտ Եղիազարյանի՝ 2015թ.-ի օգոստոսի 31-ի տեղեկություն ստանալու գրավոր ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովին ուղարկելու փոստային անդորրագրի պատճենը (վերաբերելի է սույն հայցի 2.1, 2.3 կետերում նշված փաստերին):

8.3. ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի՝ 2015թ.-ի սեպտեմբերի 19-ի թիվ 339-01 պատասխան գրության պատճենը (վերաբերելի է սույն հայցի 2.4, 2.5 կետերում նշված փաստերին, 4.4, 4.5, 4.6 կետերում, 4.6.1-4.6.3 ենթակետերում, 4.7 կետում նշված փաստարկներին):

8.4. ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի՝ 2015թ.-ի սեպտեմբերի 19-ի թիվ 339-01 պատասխան գրության ծրարի պատճենը (վերաբերելի է սույն հայցի 2.6 կետում նշված փաստին, 4.4, 4.5 կետերում նշված փաստարկներին):

9. Հայցին կցվող փաստաթղթերը

9.1. Սույն հայցի 8.1-8.4 կետերում թվարկված ապացույցները,
9.2. Սույն հայցը եւ կից փաստաթղթերի պատճենները ԲՈՀ-ին ուղարկելը հավաստող փաստաթուղթ (փոստային անդորրագիր),
9.3. Սույն հայցը եւ կից փաստաթղթերի պատճենները ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղարկելը հավաստող փաստաթուղթ (փոստային անդորրագիր),
9.4. Միջնորդություն՝ հայցվոր Աշոտ Եղիազարյանի համար պետական տուրքի վճարման արտոնություն սահմանելու մասին,
9.5. Միջնորդություն հայցի քննության ժամկետների մասին,
9.6. Աշոտ Եղիազարյանի կողմից իր ներկայացուցչին տրված լիազորագրը:

Հայցվոր՝ Աշոտ Եղիազարյան

30.09.2015թ., ք. Երեւան